ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԱԿԱՊԻ ՀԱՄԱՅՆՔ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ N 29 - Ա

<< 14 >> հուլիսի 2017 թվական գյուղ Գորակապ

ՔԱՂԱՔԱՑԻ ՌՈՄԵՈ ԱՐԱՐԱՏԻ ՂԱԶԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԱԿԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ ԿԱՏԱՐՎԱԾ 146520 ԴՐԱՄ ՎՃԱՐՈՒՄԸ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթով և հաշվի առնելով, որ քաղաքցի Ռոմեո Արարատի Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան պահպանման ու սպասարկման համար նախատեսված 08-073-0042-0040 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.066 հեկտար հողամասի (հասցեն՝ Գորակապ համայնք, 1-րդ փողոց, տուն 14) նկատմամբ քաղաքացու սեփականության իրավունքը պետական գրանցման է ենթարկվել «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ 199-Ն, ընդունված՝ 04.10.2005թ) 23-րդ հոդվածի (Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդված) հիմքով, որի դպքում հողամասի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու համար հողամասի կադաստրային արժեքի վճարում չի նախատեսվում, հիմք ընդունելով քաղաքացի Ռոմեո Արարատի Ղազարյանի 2017 թվականի հուլիսի 14-ի դիմումը՝ իր կողմից կատարված վճարումը հետ վերադարձնելու վերաբերյալ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գորակապի համայնքի ավագանին

որոշում է՝

1. Քաղաքացի Ռոմեո Արարատի Ղազարյանին հետ վերադարձնել, նրա կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գորակապի համայնքի ֆոնդային բյուջե վճարված՝ քաղաքացուն սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան պահպանման ու սպասարկման համար նախատեսված 08-073-0042-0040 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.066 հեկտար հողամասի կադաստրային արժեքի վճարումը, գումարով՝ 146520 (մեկ հարյուր քառասունվեց հազար հինգ հարյուր քսան) Հայաստանի Հանրապետության դրամ (հիմք՝ գումարի փոխանցման 15.05.2017թ թիվ 393 անդորագիր, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 14072017-08-0017):

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 5 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

ԱՐԵՍՏԱԿ ՊՈՂՈՍՅԱՆ՝ կողմ ----------

ՄԵԼԻՔՍԵԹ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ՝ կողմ ----------

ԱՐՍԵՆ ԻԳԻԹՅԱՆ՝ կողմ ----------

ԱԼԲԵՐՏ ՀԱԿՈԲՅԱՆ՝ կողմ ----------

ՌԱԶՄԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ՝ կողմ ----------

ՁՈՐԱԿԱՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

<<14 >> հուլիսի 2017 թվական
գ. Ձորակապ